

## ՀՈՒՆԱԿԱՆ ԸՆԿՈՒԶԵՆՈՒ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՅԱԽՈՒՄ

Ա. Ն. Հակոբյան

Իգոր չէ, որ ընկույզի միջուկը նման է մարդկային ուղեղի: Միջին դարերում այն կարծիքն էր տիրում, որ հոնական ընկույզն ակտիվորեն մեղմում է գլխացավլը: 18-րդ դարի ռուս բժիշկներն ընկույզն «ուղեղի տոռ» էին անվանում: Իսկ իին հոնական պատմաբան Ներոդոտոսը պնդում էր, որ իին Բարելոնի քրմերը հասարակ մարդկանց արգելում էին հոնական ընկույզ ուտել, քանի որ այն բարերար ազդեցություն է գործում մտավոր գործնության վրա, իսկ դա ուսմիկներին հարկավոր չէ:

Իհարկե, հոնական ընկույզի գաղտնիքը ոչ թե նրա ձևի մեջ է, այլ՝ բաղադրության: Այն հարուստ է C, B1,B2, PP վիտամիններով, կարտոֆինով, քինոններով ու նթերայուղերով, բջջանյութով, երկարի ու կրբալտի աղերով, զինկով: Բացի այդ, ընկույզը ֆոլիայթթվի և կալցիումի անփոխարինելի աղբյուր է: Օրական գոնե երկու ընկույզ ուտելու դեպքում հիշողությունը զգալիորեն կլավանա: Իսկ օրական չորս ընկույզը կիցքավորի հակաօրսիդանտներով, կքարելավի իմունիտեն ու բջիջների պաշպանությունը (1): Ենրոպական շատ ժողովուրդներ հոնական ընկույզը համարում էին հսկաների կերակուր, և ոչ՝ անհիմն: Նրանում պարունակվող որոշ նյութեր, իսկապես, օգտակար են մարզումներից հետո մկանների ամրապնդման համար և նպաստում են հոգնածության հաղթահարմանը: Բացի այդ, հոնական ընկույզի միջուկում շատ են մազնեզիումը և կալիումը, որոնք անհրաժեշտ են սրտի առողջության համար: Թեև ընկույզի մեջ մոտ 70% ճարպ կա, դրանց մեծ մասը չխազեցած են և օգտակար:

Հունական ընկույզնին պատկանում է ընկույզածաղկավորների՝ Juglandales կարգին, ընկույզազգիների՝ Juglandaceae Linde ընտանիքին, ընկույզենու՝ Juglans L. ցեղին: Սրանք խոշոր տերևաթափ ծառեր են՝ վրանանման սաղարթով: Հունական ընկույզենու ծաղի բարձրությունը հասնում է 30 մ-ի, տրամազիծը տատանվում է 0,9 - 1,15 մ-ի սահմաններում: Ունի հզոր արմատային համակարգ, Այն արագ աճող և պտղաբեր ծառատեսակ է հանդիսանում: Հունական ընկույզենին միատեսն ծառ է, տերևները կենտ փետրած են, արտաթրոտ գեղձերով և նթերայուղի սուր հոտով: Հունական ընկույզենին ծաղկում է մայիսին: Ծաղկները գեղեցիկ չեն, ունեն հասարակ ծաղկապատյան՝ կազմված չորս տերևիկներից: Փոշոտումը կատարվում է քամու միջոցով: Պտուղը կենդ կորիզավոր է, դարալանյութերով հարուստ, կանաչ զավաթով: Այն դրսից ծածկված է կանաչ թաղանթով կամ կանաչ պտղապատյանով, որն առաջանում է ծաղկապատյանի թերթիկների սերտածումից:



Աշնանը թաղանթը գորշանում է և հասունացած պտուղների զած ընկման ժամանակ այն բացվում է: Սերմը էնդրսպերմ չունի, պաշարային նյութերը կուտակվում են շարիլներում:

Հնկուգենին ժողովրդի կողմից մշակվող ամենահին քոյսներից է: Ծնորեկվ ընկուգենու բազմաթիվ օգտակար հատկանիշների ժողովուրդը տարբեր ժամանակներում տնկել է ընկուգենու սերմեր բնակավայրերի մոտ, անտառներում և այլ տեղերում:

Արցախի տարածքում 2009-01-01թթ, կատարված հետազոտություններից պարզել ենք, որ կա ընկուգենու տարբեր սորտեր, որոնք ստացվել են հունական ընկուգենու վայրի տեսակից:

Տարիքավոր ընկուգենիների մեծ մասը հաստ և խորդություն մաշկով, միջուկը դժվար հանվող ընկույզիկով ծառն են, որոնց դարաբաղդիները բարբառով ասում են «կոտ ճղուապոր»:

Համեմատաբար երիտասարդ ընկուգենիների ընկույզիկը բարակ կնդառ է, միջուկը հեշտ հանվող:

Ընկուգենին պահանջկոտ չէ հողի նկատմամբ, բայց լավ աճում է ջրաթափանց հողերում: Այն օժտված չէ բարձր գրտարիմացկունությամբ, դիմանում է մինչև -26 -28 աստիճան գրտին, երկարակյաց է, ապրում է 200-300 տարի, բնրատվության մեջ է մտնում 10-15 տարի հետո (2):

Հունական ընկուգենին Լեռնային Ղարաբաղում բոլոսու, հաճարենու և ուրիշ տեսակների հետ անտառակների ձևով աճում է նախալեռներից մինչև ծովի մակերևույթից 1500 մ բարձրության վրա:

Հունական ընկուգենու հայրենիքը Իրանն է: Վայրի վիճակում աճում է նաև Միջին Ասիայի լեռներում, Բալկաններում: Մեծ տարածում ունի Ռիգայից մինչև Վարչավա և Կիև: Հարավում տարածվում է Կովկասի և Ղրիմի լայնածակ տարածություններում: Մի խումբ գիտնականներ՝ Գրոսգեյմ Ա. Ս. /1940թ./, Պ. Զ. Վինոգրադով – Նիկիտին /1937/ ժամում են կովկասի ֆլորայում հունական ընկուգենու բնական տարածման վարկածը, սակայն մյուս կողմից էլ նշում են, որ տեղի բնակչությունը վարդուց է զբաղվում ընկուգենու մշակմամբ (3):

Գերմանացի գիտնական Խ. Եյզենեկյասը հաշվում է, որ հունական ընկուգենու բնական տարածման արեալը հանդիսանում է Հիմալայան լեռան արեալու մասը՝ Աֆղանստան, Կովկաս, Եվրոպայի հարավ արևելյան մասը (2):

1940թ. «Արևելյան կովկասի ռենիկտներ» աշխատության մեջ Ս.Ս. Գրոսգեյմը գրում է, որ կովկասում վայրի ընկուգենու տարածվածությունը կասկածելի է: Բայց միևնույն ժամանակ զարմանալի է, թե՞ն ինչպես են դրանք աճել մեծ թեքության, ժայռոտ լեռների արանքում: Մարդիկ չեն կարող տնկել լեռնաձորներում, մեծ քարերի արանքում, ժայռոտ տեղերում:

Լեռնային Ղարաբաղի բուսականության մեջ իր տեղն ունի հունական ընկուգենին: Ըստ Ռ. Առուշանյանի հետազոտությունների՝ Ղարաբաղում հունական ընկուգենին վայրիացած վիճակում տարածված է նախալեռնային, միջին լեռնային և բարձր լեռնային գոտիներում, ծովի մակերևույթից 1500 մ բարձրության վրա (4): Մոտ 1000 հա. տարածության վրա Թարթառ գետի /Մարտակերտի շրջան/ ավազանի միջին հոսանքի շրջանում՝ Վաղոնիս և Դրմբոն գյուղերի անտառներում տարածված են հունական ընկուգենու բուսություն: Տարածված է նաև Խաչենի միջին հոսանքի առափնյա մասում՝ Կիշանի, Զանյաթաղի, Քոլատակի, Վանքի, Բադարայի անտառներում: Ընկուգենիների տարածվածությամբ աշքի է ընկնում Հադրութի շրջանի Տումի, Մեծ Թաղլարի անտառները:

Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել ԼՂՀ – ում տարածված հունական ընկուգենու արեալները և այն քարտեզագրել, որը հնարավորություն կտա ռեալ գնահատել դրանց ներկա վիճակը: Իսկ դա կունենա կարևոր նշանակություն հունական ընկուգենու պահպանության, բնական օգտագործման և արեալի բնույթնման հիմնախնդիրը լուծելիս:

Հետազոտությունները կատարվել են 2009 – 2011 թթ. ԼՂՀ տարածքում:

Երթուղարշավային մեթոդով ուսումնասիրել և քարտեզագրել ենք հետազոտվող բույսի տարածման արեալները:

Արցախի տարածքում կատարված հետազոտություններից պարզել ենք, որ հունական ընկուգենինի կա բոլոր գյուղերում: Մի մասը տնկված է տնամերձ հողամասերում, մի մասը անտառներում՝ բոլոսու, կաղնու և այլ ծառերի հետ հարևանությամբ, անտառանզրերին և այլ տեղերում:

Ընկուգենիներով հարուստ է Մարտակերտի շրջանը:

Հարությունագումներ գյուղի անտաղի միջին մասում մոտ 4 հա տարածքի վրա կան ընկուգենիներ: Տնիկ ժողովրդի հարցումներից պարզել ենք, որ այն տնկվել է 1980-ական թվականներին: Կան նաև անտառնզրերին բոլոսու, կաղնու և այլ ծառերի հետ խառը վիճակում, արտաքայլերում՝ կենտ-կենտ:

Ծմակահող գյուղում ընկուգենիների քանակը շատ չէ՝ 100 ից ոչ ավելի::

Մեծ շեն զյուղում հունական ընկուզենուն հանդիպում են մեծամասամբ անտառներում, հազարներ է այգիներում, կան մի քանի սորտեր, ձևը և չափերը տարբեր են, լինում է մեծ, փոքր, կլոր, սրածայր:

Կուսապատում հունական ընկուզենի կա անտառներին՝ խմբերով: Պտղի մեծությունը լինում է միջին չափերի:

Հաղորդայի շրջանի Դրախտիկ զյուղում ընկուզենու տարածվածությունը շատ է, լինում են միայնակ, խմբերով, պտուղը տարբեր չափերի և մեծության է: Հիմնականում աճում են խոնավ տեղերում:

Զրակուսում աճող ընկուզենիների քանակը քիչ է, հանդիպում են անտառների եզրերին, խոնավ տեղերում, բացատներում: Քանակը հասնում է մինչև 200-ի:

Տումի զյուղում ընկուզենին աճում է քարձրադիր վայրերում, լեռների ստորոտում, անտառներում, բացատներում: Լինում են խմբերով:

Թաղոտ զյուղում տարածումը մեծ է, հանդիպում են անտառների եզրերին, լինում են խմբերով: Աճում են թխուն, կաղնու, զկռենու հարևանությամբ: Քանի որ ընկուզենու ստվերի տակ բույսերը լավ չեն աճում, դրա համար բանջարանոցներում հազվադիմ են հանդիպում:

Մարտունու շրջանի Շեխեր զյուղում հունական ընկուզենին աճում է անտառներում, ձորերում, միայնակ կամ խմբերով:

Հեր-հեր զյուղում հանդիպում են ամենուրեք, կան տարբեր սորտեր, որոնք տարբերվում են ընկույզի չափերով:

Սպիտակաշեն զյուղում հիմնականում հանդիպում են անտառներում կլիմայի չորության պատճառով, լինում են խմբերով:

Ճարտար զյուղում աճում են անտառներում և բացատներում:

Ասկերանի շրջանի՝ Բաղարա, Մարտակերտի շրջանի՝ Քոլատակ, Առաջաձոր զյուղերի անտառներում հունական ընկուզենին հանդիպում են միայնակ, խմբերով այլ ծառերի հարևանությամբ՝ անտառների եզրին, քարձրադիր վայրերում, հացահատիկի արտերի մոտ, բացատներում:

Նորագյուղում քանակը քիչ է կլիմայի չորության պատճառով: Հանդիպում են անտառներում:

Սարդարաշեն զյուղում աճում է այգիներում, ժողովուրդը զբաղվում է ընկուզենու աճնցմամբ, լավ բերք ստանալու համար ածեցնում են սերմերով, պատվաստմամբ:

Այսպիսով, հաշվի առնելով հունական ընկուզենու մի շարք օգտակար հատկանիշներ, անհրաժեշտ է պլանավորել դրա տարածքի ընդլայնման խնդիրները:

### Գրականություն

1. Иванов В. И. Тайны народной медицины, Москва 2005.
2. Харитонович Ф. Н. Биология древесных пород, Москва 1986.
3. Петров В. А. Эктоботаника Нагорного Карабаха.
4. Арушанян Р. И. Биология в школе, номер 3, 1972.

### Резюме

В данной статье представлены ареалы распространения грецкого ореха на территории Нагорного Карабаха. Учитывая некоторые полезные особенности данного вида растения, становится возможным оценить их состояние в настоящем, организовать их охрану и использование, а также возможности расширения их ареала.